Արձանագրություն N 3
ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան 11 հուլիսի 2022թ.

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ս. Ասրյանը,
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սիմոնյանը և Գ. Մելիքսեթյանը:
Քարտուղար՝ Ս. Գալստյանը:

Մասնակից ընկերության կողմից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության վերաբերյալ

Ջրային կոմիտեի կարիքների համար ՀՀ Արմավիրի մարզի Մյասնիկյան, Բամբակաշատ, Շենավան և Գետաշեն համայնքների խորքային հորերի վերականգնման աշխատաքների ձեռքբերման ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի մասնակից «Կարսիր» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են գնահատող հանձնաժողովի 06.07.2022թ. թիվ 2 որոշմամբ պահանջված փաստաթղթերը: Մասնակից «Կարսիր» ՍՊԸ-ի կողմից 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվներում սխալ է հաշվարկված «Շահույթը 11%» տողի թիվը, «Ընդամենը՝ չնախատեսված ծախսերով» տողում լրացված է միայն «Չնախատեսված ծախսերը 1.5%» երկու տողերի հանրագումարը և ներառված չէ բաժինների Ընդհանուր գումարը: «Ընդամենը ԱԱՀ-ով» տողում գրված է «Ընդամենը՝ շահույթով» տողի թիվը և ներառված չեն «Չնախատեսված ծախսերը 1.5%» 2 տողերի գումարները: Ներկայացված «Կարսիր» ՍՊԸ-ի և «ՎԷՌԼ» ՍՊԸ-ի միջև 07.07.2022թ. կնքված ենթակապալի պայմանագրի N 01 համաձայնագիրը հաստատված չէ թվային էլեկտրոնային ստորագրությամբ: Նշված Համաձայնագրի և պայմանագրի դրույթները չեն համապատասխանում, մասնավորապես համաձայնագրի 1-ին կետով ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի շրջանակներում աշխատանքներն ամբողջությամբ (100%) կատարելու է «Կարսիր» ՍՊԸ-ն, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով: Միաժամանակ Ենթակապալի պայմանագրի 1.1 կետով ենթակապալառուն պարտավորվում է իրականացնել ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ՀՀ Արմավիրի մարզ, Գետաշեն, Շենավան համայնքներում խորքային հորերի վերականգնման աշխատանքները:

Հանձնաժողովի որոշումը

Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում հանձնաժողովը որոշեց.

1. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների մասնակից «Կարսիր» ՍՊԸ-ի հայտը մերժել,

2. ՋԿ-ԳՀԱՇՁԲ-22/9-Ա ծածկագրով ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի (հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ ընթացակարգի 3-րդ և 4-րդ չափաբաժինների համար անգործության ժամկետ սահմանել ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

Նախագահ ---------- Ս. Ասրյան

Անդամներ ---------- Ա. Սիմոնյան

---------- Գ. Մելիքսեթյան

Քարտուղար ---------- Ս. Գալստյան